լին հնարիւք փախուցեալ զերծաւ 'ի բանտէ անտի, իսկ աճապարիկն այլոց կապեցան վերստին, եւ այլք կոտորեցան 'ի բերան սրոյ և կանայք պատուականք հոսեցան 'ի ժայռէ անտի։ Յետ կալոյ նոցա ամ մի ողջոյն 'ի կապանս, մեռաւ ամիրայն Բալակ, և կալաւ զիշխանութիւնն որդի նորին Տիմուր Տաշ։ Յայնժամ Ճօսլին և Թագուհին կռեցին դաշինս ընդ նմա, ետուն զդուստր Թագաւորին եւ զորդի Ճօսլինի և զայլ արս 15 'ի պատանդ եւ 100,000 դահեկան և գնեցին զԹագաւորն։ Սակայն կոմսն Գալէրան և քուերորդի Թագաւորին մնացին 'ի բանտի և սպանան յամիրայէն։

Դուքսն Վենետկոյ Դոմենիկոս Միչիէլի էառ զծովեզերեայ քաղաքն զՏիւրոս, և յետ սակաւուց յանձն արար զայն Թագաւորին Երուսաղէմի իբրեւ ընծայ և նուէր գերեզմանին Քրիստոսի, և ինքն մեկնեցաւ յաշխարհ իւր (1124)։

Մելիսանդրա անդրանիկ դուստր Բաղտովինի երկրորդի՝ ամուսնացաւ ընդ Փուլգոնի Տ'անժու, եւ էառ զԹագաւորութիւնն Երուսաղէմի 'ի տուն առն իւրում. (1130)։ Փուլգոն անկեալ 'ի ձիոյն մեռաւ (1140), որում յաջորդեաց որդի նորին Բաղտովին Գ։ Յաւուրս սորա գտաւ 'ի ժողովն Անտիոքայ Մեծ հայրապետն Հայոց Տէր Գրիգորիս ընդ եղբօր իւրոյ Ներսիսի Շնորհալւոյ ըստ հրաւիրանաց Լատին եպիսկոպոսին։ Յետ աւարտելոյ զգործ ժողովոյն՝ յոր պարտաւորեցաւ Հռոտուլփոս Լատին եպիսկոպոս քաղաքին, դարձ արար Ներսէս յաթոռն Հայրապետական. իսկ Կաթուղիկոսն Տէր Գրիգոր եկն յԵրուսաղէմ ուղեկցութեամբ Լատին եպիսկոպոսին և Նուիրակի Պապին, և 'ի միասին կատարեցին զտօն Ս. Զատկին։ Եւ յետ այնորիկ գումարեցին Լատինք դարձեալ ժողով ինչ 'ի վանս Ս. Սիօնի, ուր հրաւիրեցին նաեւ զհայրապետն Հայոց։ Ապա 'ի լինել բանից 'ի վերայ կրօնից և ծիսից Հայոց, նա իմաստութեամբ եւ ըստ իւրումն հանճարոյ առաջի եդ նոցա զկարգաւորութիւն եկեղեցւոյն Հայոց եւ համեղ բանիւք շինեաց զմիտս նոցա (1141)։ Այլ թէ որպիսի գովութիւնս գրեցին յայնժամ Լատինք վասն Հայրապետին[1].

---

[1] Ի սմին ժամանակի Արքեպիսկոպոսն Երուսաղէմի էր Տէր Եսայի Ա։